

Քիմիական և կենսաբանական գիտություններ

Բնագրերը ներկայացվում են անգլերեն լեզվով, տպագրված և էլեկտրոնային տարբերակով, համակարգչային շարվածքով՝ «Microsoft Word 2003–2010» ծրագրով և եռալեզու ամփոփումներով (հայերեն տեքստը՝ Times Armenian, ռուսերենը և անգլերենը՝ Times New Roman տառատեսակներով), որտեղ պետք է շարադրված լինեն աշխատանքի գլխավոր արդյունքները՝ առանց հղումների, 100 բառից ոչ ավելի ծավալով: Երեք ամփոփումներն էլ պետք է իրար համապատասխանեն: Բոլոր երեք լեզուներով հեղինակների ազգանունները և հոդվածի վերնագիրը գրել գլխատառերով: Տեքստը շարել 12 pt-ով, 1,5 ինտերվալով՝ աջ և ձախ կողմերում պահպանելով 2 սմ դաշտ: Առաջին էջում բոլորում են հեղինակների անվանատառերն ու ազգանունները, այնուհետև հոդվածի վերնագիրը և բոլոր համահեղինակների աշխատատեղերը, ամփոփումը և բանալի բառերը:

Բնագրի հետ հոդվածի հայերեն կամ ռուսերեն տարբերակի ներկայացումը ողջունվում է: Հստակ և հակիրճ ձևակերպումները կհեշտացնեն թե խմբագիրների, թե գրախոսների աշխատանքը, թույլ տալով նրանց կենտրոնանալ հոդվածի գիտական արժանիքների վրա:

Հոդվածի ծավալը աղյուսակներով չպետք է գերազանցի 10 էջը, հաղորդմանը 4 էջը, նամակինը՝ 2:

Հոդվածները ձևակերպվում են հստակ ենթաբաժիններով: **Ներածություն** կամ **Խնդրի դրվածքը**, որտեղ պետք է հիմնավորվի տվյալ հետազոտության անհրաժեշտությունն ու հրատապությունը, **Հետազոտության մեթոդիկան**, **Եզրակացություն** որտեղ հստակ ձևակերպվում են ստացված արդյունքները և հետևությունները և **Հղումներ**: Կարող են լինել այլ ենթավերնագրեր՝ պայմանավորված տվյալ աշխատանքի առանձնահատկություններով: Բոլոր բանաձևերը շարել «Equation» ծրագրով, քիմիական սխեմաները ISIS 2.1.4. ծրագրով (կամ ավելի թարմ տարբերակով) :

Հղումները ներկայացվում են ըստ հանդիպման հերթականության, անգլերեն (եթե ներկայացվող հոդվածը անգլերեն չէ նշվում է բնօրինակի լեզուն): Չհրատարակված աշխատանքի վերաբերյալ (բացի թեկնածուական և դոկտորական թեզերը) գրականության մեջ նշել չի թույլատրվում:

Հոդվածի վերջում նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցուցակը՝ կարգային համարը, հեղինակների ազգանուններն ու անվանատառերը: Պարբերական հրատարակությունների համար այնուհետև հաջորդում է ամսագրի ընդունված կրճատ անվանումը առանց չակերտների, հրատարակման թվականը, հատորի ու թողարկման համարները, հերթական համարը, էջը, վերնագիրը, գրքերի դեպքում՝ նաև հրատարակման վայրը, հրատարակչությունը, թվականը:

Միննույն նյութը աղյուսակի և նկարի ձևով ներկայացնել չի թույլատրվում:

Թույլատրվում է 5-ից ոչ ավելի նկար, որոնք իրենց բացատրություններով պետք է ներկայացնել առանձին File-ով:

Հոդվածը ստորագրվում է բոլոր հեղինակների կողմից:

Խմբագրությունը հեղինակին տալիս է առաջին սրբագրությունը, որտեղ ուղղման ենթակա են տպագրության սխալները:

Խմբագրությունը հեղինակներին անվճար տրամադրում է հանդեսի 1 օրինակ և հոդվածի 5 առանձնատիպ: